# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2015 թվականի N 24-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի ավագանու թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը:

1. Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալությամբ տրամադրելու համաձայնություն տալու և վարձավճարի չափ սահմանելու մասին:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
3. ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ
4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Գետամեջ, ,getamej.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2015 թվականի N 25-Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 46.2-րդ հոդվածի դ) ենթակետով՝ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարին՝ Գետամեջ համայնքի սեփականություն հանդիսացող 16-րդ փողոցի N 18 հասցեում գտնվող բնակավայրերի նշանակության հողամասից (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0224-0001-ից) 20 քառակուսի մետր մակերեսով հողատարածքն առանց մրցույթի՝ վարձակալական հիմունքներով, տրամադրել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ համաձայն հավելվածի:
2. Հողատարածքը «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել 99 տարի ժամկետով՝ լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան տեղադրելու նպատակով:
3. Հողի տարեկան վարձավճարի չափ սահմանել 1 000 (մեկ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Ավագանու անդամներ՝

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
2. ՂԱԶԱՐՅԱՆ ՍԱՐԻԿ
3. ՇԱՀԻՆՅԱՆ ԱՐԿԱԴԻ

4. ՍԱՐԳՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ

5. ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՆԱՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Գետամեջ համայնքի ավագանու 2015 թվականի
հոկտեմբերի 30-ի N 25-Ա որոշման

